* * *

Արդ՝ Մխիթար Գօշը, կիրակոս Գանձակեցին եւ ԺԲ.-ԺԳ. դդ. տարատեսակ աղբիւրներ բազմաթիւ առիթներով յիշատակում են Խօխանաբերդը (նաեւ՝ Խաւխանաբերդ, Խաւախաւն բերդ, Խոյախաւն բերդ *ձեւերով)՝ իբրեւ* Խաչէն *երկրամասի, ապա նրա Ներքին* Խաչէն *անուանուած հատուածի իշխանատոհմի (Գանձասարի կառուցող իշխանի անունով կոչուած՝ Հասան-Ջալալեաններ[62]) կենտրոնական ամրոց: Սակայն այն իրականում գոյութիւն ունէր շատ վաղուց (մասնագէտներն ամրոցի հիմնադրումը վերագրում են վաղ միջնադարի ժամանակաշրջանին), պարզապէս Թ.-ԺԱ. դդ. աղբիւրներում, մեր կարծիքով, աւելի տարածուած էր նրա* Խաչէն *անուանումը: Մեզ հասած աղբիւրներից այդ բերդանունն առաջին անգամ յիշատակւում է Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից» երկում (որը գրուել է 982-988 թթ. միջեւ[63]): Ըստ նրա նախավերջին գլխի (Գ.իբ) տեղեկութեան՝ 827 թ. Դադիվանքի «խորաձորում» Միհրանեան կոչուած վերջին Վարազ Տրդատ իշխանն իր մանկահասակ որդու հետ սպանուել է իր ազգական Ներսեհ Սիւնեցի իշխանի կողմից: Այդ ողբերգական դիպուածը չարադրում է նաեւ ԺԳ. դ. վերջի պատմիչ Ստեփաննոս Օրբէլեանը (իսկ բուն աղբիւրը Թ. դ. վերջի Հայոց կաթողիկոս Մաշտոց Եղիվարդեցու՝ մեզ չհասած պատմական երկն է[64]): Իշխանի սպանութիւնից յետոյ նրա այրին իր Սպրամ դստեր հետ կարողացել է փախչել եւ գիշերային ծանր ուղեւորութիւնից յետոյ ապաստանել* Խաչէն *բերդում («ի բերդն Խաչէնայ»), որտեղ Սպրամն ամուսնացել է տեղի նշանաւոր իշխան Սահլ Սմբատեանի որդու՝ Ատրներսեհի հետ:*

Խաչէն ամրոցն աւանդաբար համադրուել է առաւելապէս այլ բերդերի հետ՝ կաչաղակաբերդի (նաեւ՝ Հաւախաղաց, Սախասաղան՝ *Խաչէնագետի վտակ Քոլատակի ու Կարկառի վտակ Պարեգիքի ջրբաժան լեռնաշղթայի վրայ) կամ Հաւախաղացի (նաեւ՝* Հաւքախաղաց, Լաչին-ղալա՝ *Տրտուի Թուխխու եւ Արագջուր վտակների ջրբաժան լեռնաշղթայի վրայ)[65]: Սակայն Կիրակոս Գանձակեցու տուեալները չեն հաստատում այդ համադրումները: Պատմիչը յայտնում է, որ մոնղոլները, ըստ ամենայնի, Կարկառի հովիտն ասպատակելուց յետոյ, նախ նուաճեցին* Հաւախաղաց *(=կաչաղակաբերդ) ամրոցն ու դաժան հաշուեյարդար տեսան նրա պաշտպանների հետ, ապա հասան* Խօխանաբերդին *(Գանձասարի դիմաց գտնուող) եւ պաշարեցին այնտեղ Հասան Ջալալ իշխանի գլխաւորութեամբ պատսպարուած բնակչութեանը: Բացի այդ, նա, երեք անգամ յիշատակելով Խօխանաբերդը, երկիցս նշում է, որ ամրոցն այդպէս էր կոչւում «ըստ պարսկական բարբառոյն», «ըստ բարբառոյն Պարսից» (այսինքն՝ «մահմեդական[արաբ, պարսիկ կամ թիւրք ժողովուրդ]ների լեզուով»)՝ հաւանաբար, նկատի ունենալով «դեղձ» կամ*

62 Հասան Ջալալի բազմակողմանի մշակութային գործունէութեան դրուագների մասին են վկայում տէր Իսրայէլի կողմից Յայսմաւուրքի խմբագրման ճովանաւորումը, ինչպէս նաեւ Վանական Վարդապետի հետ նրա թղթակցութեան նորայայտ փաստը. վերջինիս «Հարցմունք եւ պատասխանիք» երկասիրութեան մի հատուածի խորագիրն է. «Խնդիրք Վահրամա իշխանի եւ *Ջալալա Հայչենոյ* գաւառի եւ պատասխանի Վանական վարդապետի» (տե՛ս ՄՄ, ձեռ. թիւ 2189, թ. 211ա, ըստ՝ **Ա. Ի. Ճահնազարեան**, *Վահրամեաններ իշխանութիւնը*, էջ 174):

63 Մանրամասն տե՛ս **А. А. Акопян**, *Албания-Алуанк*, էջ 214-216, 223:

64 Մանրամասն տե՛ս **Ա. Յակոբեան**, *Պատմաաշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ*, էջ 268-272:

65 Տե՛ս **Մ. Յովհաննիսեան**, *Հայաստանի բերդերը*, Վենետիկ, 1970, էջ 452. **Շ. Մկրտչեան**, *Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական յուշարձանները*, էջ 23. *ՀՅԾՏ Բառարան*, հտ. 2, Եր., 1988, էջ 665, 945. **Ս. Սարգսեան**, *Խաչէնի ամրոցները*, էջ 39-45: